«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Հայոց պատմություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

«ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարող՝ Ռիտա Բոյախչյան

Երևանի Թ. Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոց

Ղեկավար՝ Նունե Ասրյան

Երևան - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն—---------- 3

Հիմնական մաս—---------- 5

Եզրակացություն—---------- 20

Գրականության ցանկ—---------- 22

«Շղթաների մեջ ծնվում, ապրում և մեռնում ե՞ս, դու ես մեղավոր, որովհետև թույլ ես։»

Գարեգին Նժդեհ

Ներածություն

Գաղտնիք չէ, որ դպրոցում է դրվում մեր ապագա քաղաքացիների արժեհամա կարգի, աշխարհայացքի հիմքը , ուստի յուրաքանչյուր ուսուցչի գործունեության նպատակն է դաստիարակել արժանապատիվ քաղաքացի՝ օժտված ազգային ու համամարդկային արժեքներով ։ Ինչպես ասվում է Հանրակրթության պետական չափորոշչում ՝ «Նրանք /սովորողները/ ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանա դրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթու թյունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում»։[8] Այս գործընթացում, իհարկե ,իր ծանրակշիռ դերն ունի Հայոց պատմություն առարկան, որը սովորողների մոտ ազգային մտածողության և ազգային արժեքների ձևավորման մեջ շատ կարևոր ներդրում կարող է ունենալ։ Սա հստակ ձևակերպված է «Հայոց պատմություն » առարկայի պետական չափորոշչում. «Հայոց պատմություն առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձեռք բերումն է ։ Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող ,սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակ ցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգ կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը։ . . . Յուրաքանչյուր ժողովրդի պատմու թյունը՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույ թում նրա կերտած հոգևոր ու նյութական արժեքների ամբողջությունը։ Այն հիմք է յուրաքանչյուր քաղաքացու,հասարակության, պետության ապագա գործունեության։ . . . Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակ ցություն ու մտածողություն,պատասխանատու և սեփական դիրքորոշում ունեցող, կշռադատված որոշում կայացնող անձ ու քաղաքացի։ Հայոց պատմություն առարկայի շնորհիվ է սովորողը տեղեկանում իր նախնիների անցած պատմական ուղու մասին. . . , ծանոթանում հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթու

թյանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին։ » :[9]
Այսպիսով ,հայոց պատմություն առարկան բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ և չափորոշչի վերոնշյալ կետերը մենք պետք է իրագործենք հայոց պատմություն առարկայի բոլոր թեմաների, ցանկացած դասի ժամանակ։

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը

«Պապ թագավորի գահակալությունը» թեմայի ուսումնասիրությունը ավագ դպրոցում տվյալ ժամանակաշրջանի մասին ակադեմիական գիտելիքներ տալուց բացի արժեհա մակարգային դաստիարակչական մեծ նշանակություն կարող է ունենալ, որովհետև թեման, իմ կարծիքով, նաև շատ արդիական է։ Այսօր էլ, ինչպես 4-րդ դարում,մեր երկիրը դժվար ժամանակներ է ապրում, կանգնած է արտաքին աշխարհի լուրջ մարտահրավերների առջև։ Այսօր էլ մենք ունենք տարածքների,անգամ պետականու թյան պահպանման լրջագույն խնդիրներ։Սովորողները կարող են կապեր գտնել 4-րդ դարի իրադարձությունների և արդի քաղաքական գործընթացների միջև, կարող են համեմատել Արշակունյաց թագավորության գործիչների պետության անվտանգությանն ուղղված ձեռնարկները արդի գործիչների գործունեության հետ, իսկ Պապ թագավորի նման հայրենասեր,եռանդուն ու համարձակ գործչի կերպարը կարող է ոգևորել շատերին և օրինակ ծառայել։

Հետազոտական աշխատանքի նպատակը

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել «Պապ թագավորի գահա կալությունը» թեմայի ուսուցման առանձնահատկությունները, առաջարկել այդ գործընթացի իրականացման արդյունավետ պայմաններ։

Հետազոտական աշխատանքի խնդիրները

«Պապ թագավորի գահակալությունը» թեմայի ուսուցման առանձնահատկությունները ուսումնասիրելիս մենք մեր առջև դնում ենք հետևյալ խնդիրները Կրթական /ակադեմիական /
Գիտելիք

ա/ սովորողները իմանան Պապ թագավորի գահակալության տարիների հիմնական իրադարձությունները, նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը, ճանաչեն տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչներին, բնութագրեն նրանց գործունեության առանցքային դրվագներ

բ/ նկարագրեն պետության և եկեղեցու՝ որպես ազգային հոգևոր կառույցի փոխհարաբերությունները, ազգային եկեղեցու ձևավորման, կայացման ընթացքը

Հմտություններ

ա/սովորողները համեմատեն կարևոր փաստերը, երևույթները,իրադարձությունները,հասկանան դրանց պատճառա-հետևանքային կապերը, նմանություններ գտնեն արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների ու երևույթների հետ, ելք գտնեն ստեղծված իրավիճակներից

բ/ կարողանան ինքնուրույն օգտվել սկզբնաղբյուրներից, քարտեզներից, ինտերակտիվ գրատախտակից, ուսումնաօժանդակ գրականությունից, հավաքեն անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից:

Դաստիարակչական

Արժեքներ

ա/ սովորողները արժևորեն անկախ ու զորեղ պետություն ունենալու անհրաժեշտությունը, ըմբռնեն Արշակունյաց թագավորների պետության անվտանգության ու հզորացման պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

Վերաբերմունք

ա/ սովորողները գնահատեն Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության ձեռքբերումներն ու բացթողումները, գնահատական տան Պապի ներքին ու արտաքին քաղաքականությանը

Հիմնական մաս

Գլուխ 1-Պապի հաստատվելը հայոց գահին

4-րդ դարը մի բարդ շրջան էր հայոց պատմության մեջ, քաղաքական ծանր ու սուր պայքարով հագեցած և դրամատիկ իրադարձություններով հարուստ: Երբ

Պարսկաստանում Արշակունյաց հարստությունը իր տեղը զիջեց Սասանյաններին, հայ Արշակունիները մենակ մնացին իրենց դինաստիական թշնամիների դեմ, որոնք չէին հանդուրժում այն ամենը, ինչ կապվում էր Արշակունիների հետ, իսկ երբ քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստան, և ապա դարձավ պետական կրոն, դրությունը շատ ավելի բարդացավ։ Քրիստոնյա Հայաստանը սկսեց ապրել զրադաշտական աշխարհի հետ վտանգավոր հարևանությամբ։ 363թ. Բյուզանդիայի Հովիանոս կայսրի Պարսկաստանի հետ կնքած «ամոթալի» պայմանագրով չնայած Բյուզանդիան պարտավորություն էր վերցրել չմիջամտել հայկական գործերին, բայց դա չէր նշանակում, որ նա համաձայնվել էր Հայաստանը հանձնել Պասկաստանին։ Ուստի նա չէր կարող հանդուրժել պարսկական նվաճումները Հայաստանում, մանավանդ, որ վերջացրել էր գոթերի հետ ունեցած պատերազմը։ Բարդ էր նաև երկրի ներքին դրությունը։ Եկեղեցին ներխուժեց երկրի քաղաքական կյանք և դրանով պայմանավորվեցին հետագա շատ իրադարձություններ։ Սկսվեց անզիջում պայքար պետության և եկեղեցու միջև, որն ուղեկցվում էր նաև նախարարական տների և պետության միջև եղած հակամարտությամբ։ Միատարր չէր և ինքը՝ եկեղեցին, որտեղ բախվում էին հունական և ասորական եկեղեցիների կողմից հովանավորվող ուժեր, իսկ Աղբիանոսի տունը, որը բնիկ էր, ուներ հին քրմական ծագում և կրոնական բարձրագույն իշխանության հավակնորդ էր։ Այս ներքին պայքարը և արտաքին քաղաքական ծանր հանգամանքները, ավատատիրական տնտեսակարգի հողի վրա, թուլացրին երկրի դիմադրողականությունը։ 363թ պարսկա-հռոմեական «ամոթալի դաշինքից» հետո Հայաստանի համար ստեղծվում է մի ծանր շրջան. նա միայնակ կանգնում է պարսկական հսկայական ուժի դեմ: Պարսկաստանի Շապուհ Բ արքան սկզբում փորձում է Հայստանը նվաճել տեղի ներքին ուժերի պառակտման ճանապարհով. նա կաշառքով, խոստումներով իր կողմն է գրավում մի քանի հայ նախարարների և կույր գործիք դարձնում նրանց ընդդեմ Հայաստանի կենտրոնական իշխանության: Սակայն հաջողության չհասնելով՝ դիմում է բացահայտ ռազմական գործողությունների: Չկարողանալով Հայաստանը գրավել զենքի ուժով՝ Շապուհը դիմում է խորամանկության: Նա փորձում է բարեկամ ձևանալ հայոց Արշակ թագավորին և տպավորություն ստեղծել, թե իբր ցանկանում է բանակցել նրա հետ և վերջ դնել թշնամանքին: Արշակը սպարապետ

Վասակ Մամիկոնյանի հետ մեկնում է Պարսկաստան և ընկնում խորամանկ Շապուհի թակարդը: Նրանք կալանավորվում են և հետագայում սպանվում: Արշակի և Վասակի ձերբակալությունից հետո պարսկական զորքերը Զիկ և Կարեն զորավարների հրամանատարությամբ մտնում են Հայաստան և ասպատակում երկիրը: Արշակի փոխարեն պետության գլուխ է կանգնում Փառանձեմ թագուհին: Նա իր համակիր նախարարներով 11 հազար զորքով ամրանում է Արշարունիքի Արտագերս բերդում /ներկայիս Կաղզվանի մոտակայքում / : Հայերին հաջողվում է պարտության մատնել պարսկական բանակը և դուրս շպրտել երկրից: Օգտվելով պատեհ հնարավորությունից, Փառանձեմ թագուհին Պապին ուղարկում է Հռոմի Վաղես կայսեր մոտ՝ խնդրելով նրան օգնել և Պապին ճանաչել Մեծ Հայքի արքա: Կաշկանդված լինելով Եվրոպայում մղվող պատերազմական գործողություններով՝ Վաղեսը 369թ. գարնանը Պապին Տերենտիոս զորավարի հետ, առանց զորքի ուղարկում է Հայաստան: Իմանալով այս մասին՝ Շապուհը անմիջապես շարժվում է Հայաստանի վրա և պաշարում Արտագերսը: Արտագերսում փակված հայոց թագուհուն և նրան հավատարիմ ուժերին տխուր ճակատագիր էր վիճակված. ամրոցում համաճարակ սկսվեց, որը ոչնչացրեց հերոսական պաշտպանության մասնակիցներին: Պարսիկները գրավեցին ամրոցը, կողոպտեցին թագավորական գանձատունը, և գերի վերցնելով Փառանձեմ թագուհուն՝ տանջամահ արեցին: «Բուզանդի «Պարսից պատերազմը» վեպում բազմաթիվ հերոսների մեջ միակ առաջատար դեր կատարող կինհերոսը Փառանձեմ թագուհին է,որը հանդես է գալիս որպես հասարակական ակտիվ գործիչ: Հայկական մատենագրության մեջ առաջին անգամ Բուզանդի մոտ ենք հանդիպում մի կնոջ, որին կյանքում հատկացվում է տղամարդուն հավասար տեղ: Հայ կնոջ դրական բարեմասնությունների խտացված պատկերը ներկայացնող Փառանձեմ թագուհին միայն պալատական անհոգ ու շռայլ կյանքը վայելող չէ: Նա այն անձնավորությունն է,որը դժբախտության ու վտանգի պահին չի հուսահատվում ու չի ենթարկվում ճակատագրի քմահաճույքներին, այլ կամքի մեծ ուժով խեղդելով իր մեջ անձնական ծանր վշտի զգացմունքը, դուրս է գալիս թշնամու դեմ ու ղեկավարում հայրենասիրական ուժերի պայքարը և այդ պայքարում էլ ընկնում որպես հերոս»:[4, 64]

Պարսկական զորամասերը ասպատակում են երկրիը, քարուքանդ անում առևտրաշահ քաղաքները, կողոպտում բնակչությանը և հազարներով քշում գերության: «Սա հայ ժողովրդի պատմության մեջ բռնագաղթի առաջին խոշոր դեպքն է,որը ծանր հարված հասցրեց Հայաստանին:»[1,251] Նվաճելով Հայաստանը, պարսիկները վարում էին բացահայտ միաձուլման քաղաքականություն. կառուցում էին մեհյաններ, հետապնդում հոգևորականներին, պարտադրում դպրոցներում դասավանդել պարսկերեն լեզուն, խրախուսում հավատափոխներին և այլն: Տակավին պատանի արքայազն Պապը կանգնած էր դժվարագույն խնդրի լուծման առջև: Վաղես կայսրը չէր կարողանում օգնական ուժեր տրամադրել, մինչդեռ պարսիկները ամայացնում էին Հայոց աշխարհը: «Հենց այստեղ էլ առաջին անգամ դրսևորվեց Պապի ինքնատիպ, նաև անսպասելի լուծումների հանգող մտածողությունը: Նա փորձում է բանակցել հենց ոխերիմ թշնամու՝ Շապուհ Բ-ի հետ: Թե ինչ էր նախատեսում նա, այսօր դժվար է գուշակել»:[5,63] Սակայն դրա կարիքը չեղավ: Եվրոպական ճակատում կայունություն հաստատելուց հետո Վաղես կայսրը 370թ. Արինթեոսի հրամանատարությամբ օգնական զորքեր ուղարկեց Հայաստան, որոնք Պապի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի /Վասակ Մամիկոնյանի որդու/ գլխավորությամբ մի շարք հաղթանակներ տարան:

Գլուխ 2- Պապի և Մուշեղի գործունեությունը

Պապը և սպարապետ Մուշեղը անմիջապես ձեռնամուխ են լինում հայկական բանակի կազմակերպմանը:Նրանց հաջողվում է հավաքել 10000 հոգուց բաղկացած մի զորամաս և պայքար սկսել օտար նվաճողների և ներքին խռովարարների դեմ: Մուշեղ զորավարը շրջում էր երկրում և քանդում պարսիկների և ուրացողների կառուցած մազդեզական ատրուշանները: Պարսից արքունիքից պատիվ վայելող անձինք ձերբակալվում և խստագույնս պատժվում էին: Այսպես Մուշեղը լուծում էր Արշակ արքայի և Վասակ սպարապետի վրեժը: Պապ թագավորը տեր է կանգնում Կոգովիտ գավառի Դարույնք բերդում պահվող Արշակունյաց գանձերին: Երկրում վերաշինվում են ավերված բնակավայրերը, նորոգվում եկեղեցիները, կարգի բերվում պետության գործերը: Պատերազմական ժամանակաշրջանում որոշ կենտրոնախույզ ուժեր բաց չէին թողել Մեծ Հայքի կենտրոնական իշխանությունից անկախանալու առիթը: Պապի առաջին կարևոր գործը եղավ թագավորության տարածքային ամբողջականության

վերականգնումը: Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ բանակը կարճ ժամանակում ճնշեց կենտրոնախույս միտումները և վերականգնեց Մեծ Հայքի մինչպատերազմյան սահմանները: Երկրին միացան նրանից բաժանված Ատրպատականը, Նոշիրականը, Հեր և Զարևանդ գավառները, Արցախը, Ուտիքը, Շակաշենը, Փայտակարանը, Գուգարքը, Աղձնիքը, Ծոփքը, Անգեղտունը և Անձիտը: Վրաց և Աղվանից թագավորությունները, որոնք, օգտվելով խառնակ իրադրությունից ոտնձգություններ էին կատարել հայկական հողերի նկատմամբ, հպատակվեցին և հարկատու դարձան,նրանցից պատանդներ վերցվեցին: «Ապա Մուշեղ սպարապետը գնում էր Վրաց աշխարհի վրա....ամբողջ Վրաց աշխարհը նվաճում էր,...իսկ Գուգարաց բդեշխին, որ առաջ ծառայում էր հայոց թագավորին և վերջը ապստամբել էր՝ բռնելով գլխատեց ու նրա ցեղի արուները կոտորեց, իսկ կանանց ու աղջիկներին գերի վերցրին: Եվ առհասարակ բոլոր այն կողմի նախարարներին, որոնք Հայոց թագավորից ապստամբել էին՝ գլխատում էր, ամբողջ գավառը նորից նվաճում էր և պատանդներ էր առնում. մնացածներին էլ հարկի տակ էր դնում: Եվ գրավելով մինչև հին սահմանը, որ առաջուց գոյություն ուներ Հայաստանի և Վրաստանի միջև, այսինքն Կուր մեծ գետը՝ այնտեղից ետ էր դառնում»:[7, 323]: Հռոմեական օգնական զորքերի Հայաստան ժամանելն ավելի է սրում Հռոմի և Պարսկաստանի փոխհարաբերությունները, և պատերազմը այս պետությունների միջև անխուսափելի է դառնում: Վաղեսը 370թ. ինքն անձամբ է գալիս Անտիոք՝ մոտիկից ղեկավարելու ռազմական գործողությունները: 370թ. աշնանը պարսկական բանակը Ատրպատականի կողմից ներխուժում է Հայաստան: Հայկական զորքերը Մուշեղ սպարապետի գլխավորությամբ ոչ միայն կարողանում են դիմադրել,այլև ծանր հակահարված են տալիս՝ վերցնելով մեծ քանակի ավար և գերիներ: Գերիների թվում էին նաև Շապուհի «տիկնանց տիկինը» և այլ ազնվական կանայք, որոնց Մուշեղ սպարապետը շուտով ազատում և հետ է ուղարկում: «Մուշեղ Մամիկոնյանի կողմից Շապուհի կանանց ազատումն ու ետ ուղարկելը, սակայն չպետք է համարել մեկ մարդու անձնական բարձր զգացմունքների հրապարակային ցուցադրում միայն, դա փաստորեն մի ամբողջ ժողովրդի՝ հայ ժողովրդի բարոյական բարձր ոգու արտահայտությունն էր»:[4,68] Շապուհը, ապշած հայոց զորավարի արարքից, մի գավաթի վրա նկարել է տալիս Մուշեղի պատկերը՝ ճերմակ ձին հեծած: Նա ամեն անգամ

ձեռքն էր վերցնում գինու գավաթը և ասում. «Ճերմակաձին գինի արբցէ»։[7,291] Երբ հայոց զորքը վերադառնում է պատերազմից, ոմանք Պապի առջև ամբաստանում են Մուշեղին։ Թագավորը զայրանում է ,որ Մուշեղն ինքնակամ ազատել է կանանոցը ՝ անհարկի մեծահոգություն ցուցաբերելով իր մոր հանդեպ դաժան վերաբերմունք զուցաբերած Շապուհի նկատմամբ։ 371թ. գարնանը Շապուհը ձեռնարկում է նոր արշավանք,այս անգամ հարավից։ Հայկական և հռոմեական զորքերը պատրաստվում են կռվի։ Ճակատամարտը տեղի է ունենում Բագրևանդ գավառի Նպատ լեռան մոտ՝ Ձիրավի դաշտում, և պատմության մեջ հայտնի է Ձիրավի ճակատամարտ անունով։ Հայոց զորքի թիվը ավելի քան 90 հազար էր։ Տերենտիոս զորավարը խնդրում է Պապ թագավորին և Ներսես կաթողիկոսին ապահովության համար բարձրանալ Նպատ լեռը։ Կաթողիկոսի բարեխոսությամբ փարատվում է Պապի զայրույթը Մուշեղի նկատմամբ։ Սպարապետը սուրբ երդում է տալիս և ստանում կաթողիկոսի օրհնությունն ու թագավորի բարի մաղթանքը, որից հետո կրկին ստանում է զորքի հրամանատարությունը։ Ներսես կաթողիկոսը բազուկները տարածած, հայոց հաղթանակի համար աղոթում էր Նպատ լեռան վրա։ Ձիրավի ճակատամարտը վճռական նշամակություն ուներ Հայաստանի հետագա ճակատագրի համար։ Մարտնչող կողմերից յուրաքանչյուրը իր շահերն ու նպատակներն էր հետապնդում։ Շապուհ Բ-ն, որը մինչ այդ պարտության էր մատնել հռոմեացիներին և ստիպել էր նրանց կնքել 363թ. «ամոթալի պայմանագիրը», ձգտում էր իրեն ենթարկել Հայաստանը և ետ մղել հռոմեացիներին։ Հռոմեացիներն, իրենց հերթին, ջանում էին Հայաստանը դարձնել Հռոմի եթե ոչ վասալը, ապա կրտսեր դաշնակիցը՝ Սասանյանների դեմ մղվող պայքարում։ Հայերն իրենց խնդիրներն ունեին և պայքարում էին ազատվելու պարսից ոտնձգություններից, պահպանելու հայկական պետականությունը, և դաշնակցած Հռոմի հետ, վերականգնելու երկրի եթե ոչ անկախությունը, ապա հաստատուն ինքնուրույնությունը։ Այդ էր պատճառը, որ հայկական զորքերը Մուշեղ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու գլխավորությամբ կռվում են արտակարգ քաջությամբ։ Մովսես Խորենացին հաղորդում է. «Հունաց և Հայոց զորքերը. . . զորացած, թշնամիների դիակներով ամբողջ դաշտը լցրին և մնացածներին փախցնելով, հալածեցին»։ [3,103] Հայ-հռոմեական միացյալ բանակը ջախջախիչ պարտության մատնեց պարսկական բանակին։ Շապուհի զորքերը մեծ կորուստներ

տալով նահանջում են: Հայաստանը նվաճելու նրա այս մի փորձն էլ է ձախողվում: Նոր զինադադար է կնքվում պարսից արքայի և Բյուզանդիայի միջև: Շապուհ Բ-ն ստիպված էր ճանաչել Պապի թագավորական իշխանությունը, ինչը դեռևս նախորդ տարում կատարել էր Վաղես կայսրը: Ձիրավի ճակատամարտին Շապուհի բանակում մասնակցում էր դավաճան Մերուժան Արծրունին: Խորենացին պատմում է, որ հայերը բռնում են նրան ու դաժան դատաստանի ենթարկում. Սմբատ Բագրատունին շիկացած երկաթից պսակ է դնում Մերուժանի գլխին, ասելով.«Քեզ պսակում եմ, Մեհրուժան,որովհետև դու ձգտում էիր Հայոց թագավորելու և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրենի իշխանության կարգով»:[2,276] Նման վախճան է ունենում նաև մյուս դավաճանը՝ Վահան Մամիկոնյանը: Վերջինիս որդին՝ Սամվելը, հայրենասեր մի երիտասարդ, չկարողանակով տանել հոր անպատիվ արարքները, սպանում է նրան և հավատուրաց մորը ու միանում հայրենասերների բանակին: Եվ այսպես, մեծ դժվարություններից ու փորձություններից հետո, Պապը վերջապես իր ձեռքն է վերցնում երկրի կառավարումը և ձեռնամուխ լինում պետական նշանակություն ունեցող խոշոր վերափոխումների իրականացման:

Գլուխ 3- Պապի ներքին քաղաքականությունը

Պապը գահակալում է Հայաստանում, կարելի է ասել ,ավերակների վրա. քանդված էին քաղաքները, ահագին թվով ժողովուրդ գերի էր տարված, երկրում մոլեգնում էր սովը և համաճարակը: Պապը, իր ձեռքը վերցնելով իշխանությունը, համարձակորեն սկսեց առաջ շարժվել այն ճանապարհով, որ հարթել էր հայրը՝ Արշակը: Նա սկսեց վարել պետության խիստ կենտրոնացման քաղաքականություն: Պապի առաջին գործն է լինում համախմբել արքունիքի շուրջը գավառատեր նախարարներին ու բարձրաստիճան հոգևորականությանը և երկիրը դուս բերել քայքայված վիճակից: Նրա ջանքերը այդ ուղղությամբ դրական արդյունք են տալիս. անցյալում արքունիքի հետ գժտված և նրա դեմ գործող նախարարները նորից սկսում են աջակցել, իսկ Ներսես Պարթևը, որ Արշակի ժամանակ վշտացել էր և թողել կաթողիկոսությունը, նորից գործի է անցնում: Պապը Սպանդարատ Կամսարականին վերադարձնում է հայրենի Շիրակ և Արշարունիք գավառները, ինչպես նաև մյուս նախարարներին է վարձահատույց լինում հավատարիմ ծառայության համար: Անհրաժեշտ էր լուրջ քայլեր ձեռնարկել պատերազմներից

ավերված և թուլացած երկրի ներքին կյանքի բնականոն ընթացքը վերականգնելու ուղղությամբ: Պետք էր հայթայթել մեծ միջոցներ երկիրը ոտքի կանգնեցնելու համար: Մեծ ջանասիրությունից բացի այստեղ պետք էր ցուցաբերել առավելագույն նրբանկատություն, մանավանդ նախարարական տների նկատմամբ, որոնց հետ արքայի հարաբերությունները խիստ լարվել էին Արշակ Բ-ի օրոք: Անհեռատեսություն կլիներ երկրի վերաշինումն իրագործել նախարարական դասի հաշվին: Եվ այստեղ երիտասարդ արքան կրկին գնաց անսպասելի լուծման, որն ուղղվեց հոգևոր դասի դեմ: Բանը նրանում էր, որ համեմատաբար պատմական շատ կարճ ժամանակամիջոցում Հայոց եկեղեցին, իր ձեռքում կենտրոնացնելով հողային ընդարձակ տարածություններ, դարձել էր հզոր ավատատեր, և հենվելով այդ տնտեսական հզորության վրա, արդեն 4-րդ դարում որոշակի քայլեր էր անում ղեկավար դեր ստանձնելու համար նաև աշխարհիկ իշխանության բնագավառում, որը նկատելիորեն սրում էր աշխարհիկ և հոգևոր ավատատերերի հարաբերությունները: Այս խնդիրը սկսել էր անհանգստացնել դեռ Տիրանի և Արշակ Բ-ի օրոք, երբ տեղի ունեցան արքայի ու կաթողիկոսի մի քանի բախումներ: Պապը, որպես աշխարհիկ գործերի գերագույն իշխանավոր, պետք է գործնական քայլեր կատարեր իր և իր դասի իրավունքները պաշտպանելու և ամրապնդելու համար: Եվ արդեն 370-ական թվականներին Պապը մեծ հաստատակամությամբ սկսեց արմատապես սահմանափակել եկեղեցու և հոգևոր դասի իրավունքները: Եկեղեցական ամեն 7 բաժին հողից 5-ն առգրավվեց հարքունիս և բաժանվեց զինվորականներին: Վերացնել տվեց «պտղի և տասանորդի կարգը»՝ եկեղեցուն տրվող տասանորդ հարկը: Երկրի բնակչության թիվը կրճատվել էր երկարատև պատերազմների արդյունքում, ծնելիությունը ցածր էր, ուստի արքան կատարեց մի քայլ ևս, որն ավելի բորբոքեց հոգևորականների զայրույթը: Փակվեցին կուսակրոն հաստատությունները /կուսանոցներն ու մենաստանները/:Կրճատվեց հոգևորականների թիվը, նախկին հոգևորականները և նրանց ազգականները ծառայության անցան բանակում: Պապը մեծ ուշադրություն է դարձնում երկրի պաշտպանության գործին: Նա իր եռանդուն սպարապետի՝ Մուշեղ Մամիկոնյանի գործուն աջակցությամբ ստեղծում է 90 հազարանոց մարտունակ բանակ: Պապի գործունեությունը առաջ բերեց հոգևոր դասի թշնամանքն ու ատելությունը: Նրան կեղծ

մեղադրեցին անգամ կաթողիկոս Ներսես Մեծին թունավորելու ,անպարկեշտ վարք ու բարք ունենալու մեջ, մինչդեռ նա բացառիկ սեր ու հեղինակություն էր վայելում երկրում, ինչի մասին վկայում է հռոմեացի պատմիչ Ամիանոս Մարկելիանոսը. «համեստ մի մարդ,որը բանսարկությունների ու չարագործության զոհ էր դարձել»:[3,105] Երիտասարդ արքան կատարեց մի հետաքրքիր քայլ ևս, որը կարելիմ է համարել նրա կողմից Տրդատ Գ Մեծի սխալի սրբագրման փորձ: Նա, պահպանելով քրիստոնեության պետական կրոնի կարգավիճակը, երկրում վերականգնեց խղճի ազատությունը: Ամեն ոք ստացավ դավանանքի ազատություն: «Պապը, ինչպես հետևեցնում է Հ. Մանանդյանը Փավստոսի վկայություններից, թույլատրել էր ամուսնալուծությունը, հրամայել էր, որ կույսերն ամուսնանան, չէր արգելել մահացածների վրա սուգ ու կոծ անելը, հեթանոս հայերի նկատմամբ եղել էր հանդուրժող»: [3,105] Հայոց նախաքրիստոնեական հավատքի հետևորդները կրկին կանգնեցրին հայոց հին աստվածների արձանները: Պապ թագավորի այս ձեռնարկումները իր ժամանակին, ինչ խոսք, ունեին առաջադիմական նշանակություն և բխում էին պետության ու ժողովրդի շահերից:

Գլուխ 4 –Պապի արտաքին քաղաքականությունը

Պապը այն գահակալներից չէր, որ խաղալիք լիներ հռոմեացիների ձեռքին:Նա արտաքին քաղաքականության ասպարեզում, հատկապես իր գահակալության վերջին տարիներին, աշխատել է միանգամայն ինքնուրույն լինել: Նա փորձել է նույնիսկ բանակցություններ վարել Շապուհի հետ, վերականգնել դիվանագիտական հարաբերությունները Պարսկաստանի հետ՝ տարածաշրջանում հավասարակշռություն պահպանելու հեռանկարով: Պապն աշխատել է նաև երկրից դուրս հանել հռոմեական կայազորները, որոնց հրամանատար Տերենտիոսը միջամտում էր Հայաստանի ներքին գործերին և աշխատում իր շուրջը համախմբել Պապի քաղաքականությունից դժգոհ եկեղեցականներին և կենտրոնախույս նախարարներին: Սա չէր կարող չանհանգստացնել հռոմեական արքունիքին: Վաղես կայսրը, գաղտնի ծրագրելով նրան գահընկեց անել, բանակցությունների պատրվակով հրավիրում է Տարսոն: Բարեբախտաբար Պապ թագավորը հռոմեական բանակում ծառայող հայ զինվորականներից տեղեկացավ ծրագրվող դավադրության մասին և կարողացավ 300 թիկնապահներով դուրս պրծնել ծուղակից ու վերադառնալ Հայաստան: Ամիանոս

Մարկելիանոսի վկայությամբ՝ «ծրագրված դավադրության մասին լուրն արդեն հասել էր Հայաստան, և ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց անվնաս վերադարձած սիրելի թագավորին»։[5,66] Վաղեսը ներողություն խնդրեց «թյուրիմացության» համար,Պապն էլ դիվանագիտորեն ձևացրեց, թե ոչինչ չի պատահել։ Դրանով, սակայն խնդիրը չփակվեց։ Հայոց երիտասարդ արքան, լինելով բավականաչափ ինքնավստահ, ուղղակիորեն պահանջեց Վաղես կայսրից զիջել բոլոր այն տարածքները, որոնք ժամանակին պատկանել են Հայոց թագավորությանը։ Դրանք ներառում էին ողջ Մեծ Հայքը՝ Հայոց Միջագետք նահանգով,որի կենտրոնը Ուռհա-Եդեսիա քաղաքն էր, Փոքր Հայքը, նաև Կապադովկիան։ Այդ մասին Փավստոս Բուզանդը գրում է. «. . . Հետո պատգամավորներ էր ուղարկում Հունաց թագավորի մոտ,թե Կեսարիայի հետ ուրիշ տասը քաղաքներ մերն են եղել, ետ տուր. Ուռհա քաղաքն էլ մեր նախնիք են շինել, ուստի եթե չես ուզում, որ խռովություն ծագի, ետ տուր, հակառակ դեպքում մեծ պատերազմով կպատերազմենք»։ [7,353] Պապի ինքնուրույն քաղաքականությունը նկատվում է նաև կաթողիկոսության կատմամբ։ Հայոց եկեղեցու հովվապետին էին պատկանում ոչ միայն երկրի գերագույն հոգևոր իշխանությունը, այլև կրթական ողջ համակարգը և Մեծ Դատավորի իրավասությունները։ Այլ կերպ ասած՝ կաթողիկոսը երկրի հոգևոր, կրթական և դատական համակարգերի գերագույն ղեկավարն էր, ինչը, փաստորեն կաթողիկոսին դարձնում էր թագավորից հետո առաջին դեմքը երկրում։ Սակայն այդքան պատասխանատու պաշտոնում ընտրվողը, սկսած Գրիգոր Լուսավորչից, կարող էր պաշտոնավարել միայն Հռոմեական կայսրությունում գտնվող Կեսարիայի միտրոպոլիտությունում ձեռնադրվելուց հետո։ Դա մեծ հնարավորություն էր տալիս Հայաստանի ներքին գործերին օտար ուժերի միջամտության համար, ինչը չէր կարող չանհանգստացնել հայոց արքաներին։ Խնդիրը լուծելուն ձեռնամուխ է լինում երիտասարդ արքա Պապը, որը նույնպես չէր ցանկանում, որ հայ եկեղեցին վասալական կախվածություն ունենա Կեսարիայից և ղեկավարվի հույն պատրիարքի թելադրանքներով։ Ներսես Մեծի մահից հետո նախ նա Կեսարիա է ուղարկում հայոց կաթողիկոսի իր թեկնածուին, որն այնտեղ ձեռնադրվելու փոխարեն արժանանում է խիստ բացասական վերաբերմունքի։ Իսկ Կեսարիայի թեկնածուն միանգամայն անընդունելի էր Հայաստանի համար։ Պապ թագավորը հիանալի օգտագործեց

Հռոմեական կայսրության արևելքում Կեսարիայի և Տիանայի միտրոպոլիտությունների հակասությունները՝ խաղարկելով յուրօրինակ բազմաքայլ շախմատային գործողություն: Նա իր թեկնածուին հանձնարարեց գնալ Տիանա, որի միտրոպոլիտը սիրով ձեռնադրեց նրան: Խնդրի սրումը մեծ աղմուկ բարձրացրեց ժամանակի քրիստոնյա աշխարհում: Ի վերջո՝ Պապը հայտարարեց, որ անընդունելի են և Տիանայում ձեռնադրված իրթեկնածուն, և Կեսարիայի առաջադրածը: Փոխարենը հայոց եպիսկոպոսները Մեծ Հայքում կաթողիկոս ձեռնադրեցին Հուսիկ Աղբիանոսյան եպիսկոպոսին, որը չգնաց Կեսարիա: Այդ ժամանակից ի վեր հայոց կաթողիկոսներն ընտրվում և ձեռնադրվում են Հայաստանում: Պապ թագավորի շնորհիվ Հայոց եկեղեցին ձեռք բերեց անկախություն և բռնեց ազգային հոգևոր հաստատություն դառնալու ճանապարհը, որը լիովին իրականություն դարձավ Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գործունեության շնորհիվ: Պապի այս ընդգծված ազգային քաղաքականության նպատակն ի վերջո Հայոց թագավորության նախկին հզորության վերականգնումն էր:

Գլուխ 5- Պապ թագավորի սպանությունը

Պապ թագավորն իշխանության եկավ հռոմեական զորքերի օգնությամբ, սակայն փայլուն հասկանում էր, որ Հռոմեական կայսրության համար Հայաստանը ցանկալի է միայն որպես իրենց շահերի ոլորտում գտնվող խամաճիկային մի պետություն: Դա անհամատեղելի էր Հայոց թագավորության նախկին փառքն ու հզորությունը վերականգնելու երիտասարդ ու եռանդուն արքայի ծրագրերի հետ: Հռոմեական արքունիքում արդեն իսկ անհանգստություն էին առաջացրել հայոց կաթողիկոսի Հայաստանում ձեռնադրվելը, հայկական մեծաթիվ բանակի կազմակերպումը, որոնց այժմ գումարվեցին հայ-պարսկական հարաբերությունների վերականգնմանն ու համահայկական մեծ թագավորության ստեղծմանն ուղղված միտումները: Անհանգստացած Վաղես կայսրը հանձնարարեց Տերենտիոս զորավարին սպանել հայոց թագավորին: Տերենտիոսը Հայաստանում գտնվող հռոմեական դաշնակից զորքերի հրամանատարն էր և ուներ Պապի հետ անձնական մտերմություն. նա ժամանակին մասնակցել էր Ձիրավի և այլ ճակատամարտերին: Ամիանոսը գրում է ,թե ինչպես Տերենտիոսը, «որպես բարեկամության ապացույց, մեկ ցույց էր տալիս Վաղեսի բարեկամական նամակը, մեկ ինքն էր գնում նրա մոտ հյուրասիրության: Եվ վերջապես

դավադրությունը վերջնականապես կազմակերպելուց հետո, նա ամենաքաղաքավարի ձևով հրավիրում է իր մոտ: Պապը, չկասկածելով ոչ մի բան, գալիս նստում է իր համար նշանակված պատվավոր տեղում:Մատուցվում են ամենաընտիր կերակուրները, ընդարձակ դահլիճը դղրդում է լարային և փողային գործիքների նվագից և Երգեցողությունից: Երբ գինին սկսում է իր ներգործությունը ունենալ և մարդիկ տաքանում են, խնջույքի կազմակերպողը ինչ որ պատրվակով դուրս է գալիս և իր հետ բերում ահեղ տեսքով մի բարբարոսի. . . Վայրենին, գազանային հայացքով , սուրը պատյանից հանած, առաջանում է սպանելու երիտասարդ թագավորին, որի համար կտրված էին դուրս գալու բոլոր ճանապարհները: Թագավորը, որը թեքվել էր օթյակում, տեսնելով նրան, կանգնում, հանում է դաշույնը, պաշտպանելու իր կյանքը, բայց ընկնում է խոցված կրծքով, որպես խայտառակ զոհ՝ ամոթաբար խփված երկրորդ հարվածից: Այդ անազնիվ գործի հետևանքով խախտվեց վստահությունը / հռոմեացիների նկատմամբ /: Օտարերկրացու արյունը ցրիվ եկավ աստծո առջև՝ հյուրասիրության շքեղ սփռոցի վրա. . »:[1,257] Մեծ Հայքը կորցրեց իր երիտասարդ տաղանդավոր արքային: Նրա մահվանից տասներեք տարի հետո Մեծ հայքը բաժանվեց Հռոմի և Պարսկաստանի միջև, իսկ 428թ. անկում ապրեց Արշակունյաց արքայատոհմը Հայաստանում: Իսկ եթե չսպանվեր Պապը, միգուցե չլիներ 387թիվը:

Մեփական հետազոտության արդյունքներ

«Պապ թագավորի գահակալությունը» թեման ունի ուսուցման իր առանձնահատկությունները և պահանջում է համակողմանի մոտեցում, արդյունավետ մեթոդների ու հնարների ընտրություն: Թեմայի ուսուցման առանձնահատկություններից է ուսումնասիրվող ժամանակաշրջանի բարդությունը: Քննարկելով հայ-պարսկական ու հայ-հռոմեական հարաբերությունները՝ պետք է հասնել նրան,որ սովորողները լավ պատկերացնեն հայ ժողովրդի համար այդ ծանր շրջանը, երբ Պապը եկավ իշխանության գլուխ, և լինելով տակավին երիտասարդ,իր ուսերի վրա վերցրեց երկիրը այդ վիճակից հանելու ողջ պատասխանատվությունը: Մեծ ջանքեր էր պետք գործադրել թե արտաքին թշնամու, թե ներքին կենտրոնախույզ ուժերի դեմ պայքարելու, երկիրը տնտեսապես և ռազմական առումով հզորացնելու համար: Ավագ դպրոցի 10-րդ դասարանում մեծ չէ

սովորողների և Պապի տարիքային տարբերությունը, և մենք հաճախ հարցադրում ենք անում.«իսկ դուք պատրաստ եք այս տարիքում վերցնել մի ողջ երկրի պատասխանատվություն»:

Թեմայի ուսուցման առանձնահատկություններից է նաև այն, որ Պապ թագավորը, լինելով հակասական կերպար, միանշանակ գնահատական չի ստացել թե իր ժամանակակիցների կողմից, թե հայ և օտար պատմագիտական գրականության մեջ: Եվ որպեսզի սովորողները բազմակողմանի գիտելիքներ ստանան նրա գործունեության մասին, ցանկալի է, որ դասագրքից բացի ուսումնասիրեն այլ ուսումնաօժանդակ գրականություն: Այստեղ կարևոր ենք համարում և սկզբնաղբյուրների ուսումնասիրումը /Փավստոս Բուզանդ «Հայոց պատմություն », Մովսես Խորենացի «Հայոց պատմություն »/ և պատմագեղարվեստական գրականության ընթերցումը «/Ս. Զորյան «Պապ թագավոր»,Ա.Պեպանյան «Մայրամուտից առաջ » և այլն /: Պետք է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա.նախ՝ սովորողները կարողանան պատմական գեղարվեստական գրականությունից իրենց իմացածը համադրել սկզբնաղբյուրներից ստացած տեղեկությունների հետ, քանի որ հաճախ նրանք գեղարվեստական գրքերի սյուժեն նույնացնում են պատմական ճշմարտությունների հետ,և երկրորդը՝ հասկանան հայ պատմիչների, մասնավորապես Բուզանդի Պապ թագավորի նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքի պատճառները, և թե ինչու են հայ և օտար պատմիչների Պապ թագավորին տված գնահատականները այդքան հակասական:

Թեմայի ուսուցման մյուս առանձնահատկությունն էլ այն է,որ Պապ թագավորի գահակալության ժամանակ շատ լարված էին հարաբերությունները պետության և եկեղեցու միջև: Այստեղ պետք է սովորողներին բացատրել եկեղեցի-նախարարական համակարգ-պետություն փոխհարաբերությունների տրամաբանությունը, և թե ինչու Պապի գործունեությունը առաջ բերեց հոգևոր դասի թշնամանքն ու ատելությունը:

Թեման առանձնահատուկ է նաև նրանով,որ ուսուցման ժամանակ մենք անդրադառնում ենք հայ ռազմարվեստի պատմության ամենափայլուն էջերից մեկին՝ Ձիրավի ճակատամարտին:Հայոց բանակի շռնդալից հաղթանակը պետք է տեղին օգտագործել սովորողների արժեհամակարգում հպարտության,ինքնավստահության

զգացումներ արմատավորելու համար: Դաստիարակչական առումով մեծ նշանակություն կարող է ունենալ նաև այնպիսի պատմական հերոսների հետ ծանոթանալը, ինչպիսիք են Մուշեղ Մամիկոնյանը, Փառանձեմ թագուհին,որոնց արարքները հայ ժողովրդի բարոյական բարձր ոգու արտահայտումն են: Թեմայի ուսուցման ժամանակ պետք է ընդգծել Պապի՝որպես ազգային պետականամետ գործչի կերպարը, անկախ ու զորեղ պետություն ունենալու նրա ձգտումը, այնպիսի պետություն,որը չպետք է կախում ունենար ոչ Պարսկաստանից,ոչ էլ Հռոմից:Սրան հավելենք նաև նրա շնորհիվ Հայոց եկեղեցու անկախացումը և ազգային դառնալու գործընթացի սկիզբը: Թեմայի դասավանդման ժամանակ պետք է Պապի ձեռքբերումներից բացի խոսել նաև բացթողումների մասին, դրանով և սովորողների մոտ զարգացնել վերլուծական , քննադատական մտածողություն,և հասնել նրան,որ սովորողները իրենք գնահատական տան Պապի ներքին ու արտաքին քաղաքականությանը: Դրա համար կարելի է ստեղծել տարբեր կոնֆլիկտային իրավիճակներ և բանավեճերի, դեբատների, դերային խաղերի միջոցով հնարավորություն տալ աշակերտներին քննադատել, հայտնել իրենց կարծիքը, ելք գտնել ստեղծված իրավիճակներից:Բանավիճող կողմեր կարող են լինել Պապ թագավորը և Ներսես կաթողիկոսը,Պապ թագավորը և Մուշեղ սպարապետը, Պապ թագավորը և Վաղես կայսրը և այլն:Ի վերջո այս ամենի արդյունքում սովորողների մոտ կձևավորվի նաև իրենց դիրորոշումը:

Առաջարկներ

«Պապ թագավորի գահակալությունը» թեմայի դասավանդումը ավելի արդյունավետ դարձնելու համար կարելի է օգտագործել տարբեր մեթոդներ ու հնարներ,զարգացնել տարբեր հմտություններ ու կարողություններ:

Օրինակ՝ Պապ թագավորին ավելի ամբողջական հասկանալու համար կարելի է քննարկել նրա վարքագծի առանձին դրվագներ : Կարելի է կազմակերպել **փոքրիկ բանավեճ**.արդյոք լավ դիվանագետ էր Պապը, լինելով տակավին երիտասարդ, արդյոք շատ համարձակ արտաքին քաղաքականություն չէր վարում՝բացեիբաց դուրս գալով Վաղեսի դեմ: Ճիշտ արեց նա արդյոք,երբ փրկվելով մահափորձից,փախչելով Տարսոնից, շարունակեց վստահել հռոմեացիներին և չզգուշացավ նրանցից: Եվ ,ի վերջո, ճիշտ է

արդյոք այն տեսակետը,որ եթե չսպանվեր Պապը, չէր լինի 387 թիվը: Այս և նման հարցադրումներով բանավեճերը շատ արդյունավետ են անցնում և օգնում են սովորողներին ունենալ շատ հարցերի պատասխաններ:

Պապ թագավորի գործունեությունը կարելի է ամփոփել «Պատմական հիշողության օղակներ» վարժությամբ,որի ժամանակ սովորողները լրացնում են հինգ օղակներ:

1- Ով- Պապ թագավորը

2-Փաստ -Հայաստանի ծանր վիճակը

3-Խնդիրներ-Հայաստանի տարածքային կորուստները,զրադաշտականության տարածումը, նախարարների դավաճանությունն ու ներքին անմիաբանությունը,Պարսկաստանի և Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականությունը

4-Լուծումներ-Պապի և Մուշեղի կողմից տարածքային նվաճումները, հույների նկատմամբ պահանջատիրական քաղաքականությունը, ատրուշանների քանդումը, պարսիկների դեմ բազում հաղթանակները, հակաեկեղեցկան քաղաքականությունը, կաթողիկոսի ընտրության կարգի փոփոխությունը

5-Հետևանքներ-Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը Հայոց եկեղեցու անկախացումը, բյուջեի հարստացումը, բանակի հզորացումը, բնակչության աճի խթանումը, պետականության ամրապնդումը

Թեմայի ուսուցման ընթացքում կարելի է օգտվել նաև **համացանցից**,ուր բազմաթիվ հետաքրքիր հոդվածներից բացի կան տվյալ ժամանակաշրջանին վերաբերող նկարներ,փոքրիկ անիմացիոն ֆիլմեր: Օրինակ«Արտագերս և Պապ Արշակունի»ֆիլմը դիտելիս սովորողները տեսնում են տվյալ ժամանակաշրջանի զինվորների սպառազինությունը, պարսպաքանդ մեքենաները՝ բաբաները, ճակատամարտերի ընթացքը և այլն:

Ուսումնական նյութը ավելի տեսանելի դարձնելու, միաժամանակ սովորողների մոտ գործնական հմտություններ զարգացնելու համար կարելի է օգտվել տարբեր քարտեզներից և պաստառներից: Օրինակ«Վճռորոշ ճակատամարտեր» պաստառը, ուր Զիրավի ճակատամարտը ներկայացված է երկու փուլով:

ա- հակառակորդ զորքերի ընդհարումը,հայոց այրուձիի հաջող ընտրված մարտավարությունը՝ կեղծ փախուստը դաշնակից հռոմեացիների կողմից կազմված վահանաշարքի /կառ / ներսը

բ- փոթորկալից նետաձգությունից արնաքամ եղած պարսկական զորքերի գլխովին ջախջախումը և հետապնդումը

Երկու փուլերի ընթացքում ծավալված մարտական գործողությունները ցույց են տրված համապատասխան գույներով և պայմանանշաններով,որոնց վրա պետք է հրավիրել սովորողների ուշադրությունը:

Թեմայի ուսուցման պրոցեսում կարելի է օգտագործել աշխատանքային տետրերը.դուրս գրել կարևոր թվերը,գրել Պապ թագավորի մասին կենսագրական բանաստեղծություն և այլն:

Եզրակացություն

Վերլուծելով հետազոտական աշխատանքի արդյունքները կարող ենք ասել,որ թեմայի դասավանդման արդյունքում սովորողները կարող են հիմնավոր գիտելիքներ ստանալ Պապ թագավորի գահակալության տարիների հիմնական իրադարձությունների,նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության մասին:

Պապը մեր պատմության մեջ մնաց որպես ամենաերիտասարդ, ամենահամարձակ, ամենաինքնատիպ արքաներից մեկը, որը, չնայած իր կարճ գահակալությանը, կատարեց բազում գործեր, որոնք Պատմահոր խոսքերով ասած, «արժանի են գրով հիշատակության . . .»: Նա իշխանության գալով Հռոմի օգնությամբ,կարողացավ շատ կարճ ժամանակահատվածում անկախանալ Հռոմից և վարել անկախ քաղաքականություն: Պապը միավորեց երկիրը և վերականգնեց նախկին սահմանները: Ձիրավի ճակատամարտում պարտության մատնելով Շապուհին, վերջնականապես դուրս շպրտեց պարսիկներին երկրից:

Սովորողները հասկանում են և հիմնավորում Պապի հակաեկեղեցական քաղաքականության պատճառները:Նա փակեց բոլոր կուսանոցներն ու այրիանոցները, ինչի շնորհիվ ավելացավ երկրի բնակչությունը: Նա փակեց աղքատանոցները, որոնք քամում էին երկրի բյուջեն: Նա ստիպեց հոգևորականությանը աշխատել և զինվորագրվել, կրճատեց եկեղեցական հողատիրությունը և այս միջոցների հաշվին

բանակը հասցրեց 100 հազարի: Ի վերջո նա անկախացրեց եկեղեցին Հռոմից և մենք այսօր ունենք ազգային եկեղեցի:

Ծանոթանալով սկզբնաղբյուրներին,կարդալով Պապի մասին հակասական,երբեմն նույնիսկ շատ վատ կարծիքներ,միևնույն է ,սովորողները ընկալում են նրան որպես մեր պատմության մեջ ամենավառ անհատականություններից մեկը, որի գործունեությունը ուներ առաջադիմական նշանակություն և ամբողջությամբ բխում էր պետության ու ժողովրդի շահերից:

Սովորողները, համեմատելով տվյալ ժամանակաշրջանի փաստերն ու երևույթները, նմանություններ են գտնում արդի պատմական գործընթացներում առկա իրադարձությունների հետ և փորձում են Պապ թագավորի օրինակով ելք գտնել իրավիճակից:

Սովորողները ծանոթանալով Պապ թագավորի գահակալության շրջանի պատմությանը, հայրենասիրության մեծ դասեր են ստանում: Նրանք տեսնում են մարտիկի, որը հանուն ազգի, պետության շահերի պայքարի է նետվում: Նա երիտասարդ էր, թերևս անփորձ, թերևս ոչ այնքան լավ դիվանագետ, բայց համարձակ էր, կամային, օժտված ազգային մտածողությամբ: նա պայքարում էր իր հայրենիքի

յուրաքանչյուր թիզ հողի համար, ոչ թե զավթում ուրիշինը: Պապն իր առջև խնդիր էր դրել ոչ միայն հանել երկիրը ծանր վիճակից, այլև ստեղծել կենտրոնացված իշխանությամբ մի անկախ թագավորություն, որը չպետք է կախում ունենար ոչ Պարսկաստանից , ոչ Հռոմից: Այս պատճառով էլ նա դարձավ դավադրության զոհ:

Նրան համարում են հայոց պատմության մեջ լավագույն թագավորներից մեկը, եթե ոչ լավագույնը: Ուսումնասիրելով թեման, սովորողները դասեր են քաղում պատմությունից. անմիաբանությունից, դավաճանությունից, արժևորում են անկախ ու զորեղ պետության անհրաժեշտությունը, սիրում են իրենց հայրենիքը, ի վերջո հայրենասիրությունը նրանց արժեհամակարգում , իմ կարծիքով, թելադրված մեր երկրի այսօրվա վիճակով, ամենակարևորն է :

Գրականության ցանկ

1 - Գարեգին Նժդեհ,Գլխովին կորչելու վտանգը,Երևան, Վերնատուն մեդիա ՍՊԸ, 2021թ., 208 էջ

2 - Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ս., Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն,Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1975թ.,781 էջ

3 - Հայ ժողովրդի պատմություն ,հ. 2,Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984թ. 691 էջ

4- Մելիք-Բախշյան Ս.,Հայոց պատմության աղբյուրագիտություն,Երևան, ԵՊՀ հրատարակչություն,1979թ. ,307 էջ

5- Մովսես Խորենացի,Հայոց Պատմություն,Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1981թ. 428 էջ

6- Մովսիսյան Ա.,10 հայ ականավոր արքաներ,Երևան, Զանգակ-97, 2009թ,88 էջ

7- Փավստոս Բուզանդ,Հայոց պատմություն,Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1987թ. 456 էջ

8- ttps://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

9- https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf